



internationales literaturfestival  berlin

Համաշխարհային ընթերցանություն նուիրուած հայոց ցեղասպանութեան 100 ամեակին Ապրիլի 24-ին 2015 թ.

2015 թ. Ապրիլի 24-ին, Պետրինի գրականութեան միջազգային փառատօնը եւ Պոդստամի Լեփսիւսի տունը կոչ կ'ուղղեն համաշխարհային ընթերցանութեան, նուիրուած՝ հայոց ցեղասպանութեան 100 ամեակին:

Հարիւրաւոր հայ մտաւորականներ՝ գրողներ, երաժիշտներ, երեսփոխաններ եւ հոգեւորականներ 1915 թ. Ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսոյ (այժմ՝ Ստամպոլ) մէջ ձերբակալուեցան ապա արքորուեցան Թուրքիոյ ներքին շրջանները եւ մեծ մասամբ սպանուեցան: Այդ՝ սկիզբն էր մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութեան մը. հայերու նկատմամբ տեղի ունեցած ցեղասպանութիւնը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն ծրագրուած ու իրագործուած առաջին ցեղասպանութիւնն է ժամանակակից պատմութեան մէջ: Օսմանեան կայսրութեան մէջ ցեղասպանութեան զոհ գնաց աւելի քան մէկ միլիոն հայ:

Դէպքերը տեղի ունեցան համաշխարհային հասարակութեան աչքին առջեւ եւ միանշանակ ապացուցուեցան գերմանական, աստրո-հունգարական, իտալական, ամերիկեան, սկանդինաւեան, հայկական եւ օսմանեան աղբիւրներով, ինչպէս նաեւ բազմաթիւ պատմական հետազոտութիւններով: Արդէն 1915 թ. Օգոստոսին New York Times-ը կը գրէր կանխամտածուած ու ծրագրուած գտումներու եւ ոչնչացման ծրագիրի մը մասին, որուն նմանը պատմութիւնը տակաւին չէր տեսած: Օսմանեան կայսրութեան դաշնակից գերմանական կայսերական կառավարութիւնը յանգեցաւ միեւնոյն եզրակացութեան՝ առանց անոր դէմ որեւէ քայլ բան ձեռնարկելու:

Թրքական քաղաքականութիւնը մինչեւ այսօր տակաւին կը հերքէ հայերու դէմ իրագործուած օսմանեան ցեղասպանութիւնը, հակառակ անոր որ փաստերը ակնյայտ են ու ծանօթ՝ արդէն մօտաւորապէս հարիւր տարիէ ի վեր: Հնդիկ գրող Արունդհաթի Ռոյը այս գայթակղութիւնը ի թիւս այլ հարցերու, զայն եւս 2009

թուականին Պեռլինի գրականության միջազգային փառատօնին հրապարակաւ քննարկման նիւթ դարձուց:

1915 թ. ու անկէ ետք անթիւ հայկական ձայներ լռութեան դատապարտուեցան: Միւս ձայները, ինչպէս նաեւ աւելի ու աւելի շատ ձայներ ժողովրդավարական թրքական քաղաքացիական հասարակութենէն, անկէ ետք աւելի բարձր դարձան ու հանդէս եկան մոռացութեան դէմ: Ի յիշատակ գոհերու եւ ցեղասպանութեան միջազգային ճանաչման պահանջով պայմանաւորուած՝ կոչ կ'ուղղենք 2015 թ. Ապրիլի 24-ին հայ հեղինակներու, ընդ որում նաեւ Սիամանթոյի, Կոմիտասի, Եղիշէ Չարենցի, Ուիլիեմ Սարոյեանի, Յովհաննէս Շիրազի, Պարոյր Սեւակի, Յակոբ Մնձուրիի, Միլվա Կապուտիկեանի, Հրանդ Տինքի գրական գործերու համաշխարհային ընթերցանութեան:

Առաջին ստորագրողներ՝

Ռոլֆ Հոսֆելդ, Կոնրադ Կուհն, Ուլրիխ Շրայբեր, Հասմիկ Պապիան